

Հ. Յ. Գ.
ՄԱՍԼՈՅ ԴԻԻԱՆ

ԴԻՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1904

„Droschak”

ORGANE
de la Fédération
Révol. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak”
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԻՆԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ԲԱՍԵՆԻ ԿՈՒԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՑ



Հ.Յ.Գ. ԻՐԱՅԻ
ԳՐԱՆՈՒԹՅԱՆ
Ա.Ր.Բ. ԻՐԱՅԻ
ԼԻԲՐԱՐՈՒ



ԱԻԵՏԻՍ
(Կրտսեր որդին)

ՍԵՐՈՐ
(Հայրը)

ՅԱԿՈՐ
(Մեծ որդին)

„ՏԱՐՈՆԻ ԱՌԻԻԾՐ ԵՒ ԻՐ ԶԱԳՈՒԿՆԵՐԸ”

(Մանրամասները տես խրատ 23)

ՏԱՐՈՆԸ ԱՐԵԱՆ ՄԷՉ



Նորէն հաւար... Գազանը, երկար ժամանակ սանձահարած, կրկին ահա առաջ է սլանում մոլեգին ոստիւններով, և Սասունի առաջին ջարդի տասնամեակին՝ անհուն կսկիծով ականատես ենք լինում միւլնոյն վայրերում՝ միւլնոյն արիւնոտ տեսարաններին...

Նորէն հաւար... Անբախտ հայաստանցին քանի՞ տարի է, հնչեցնում է այդ սրտաձմիկ, աղելսարչ հաւարը... Յեղափոխական կազմակերպութիւնը քանի՞ տարի է, յորդորներ է կարդում: Բայց քանիսն են արձագանք տւին, — ծանր է մտածել... Եւ ահա հասաւ փորձութեան ժամը, երբ պիտի ցոլայ, պիտի երևան գայ անտարբերութեան ոճրի աստիճանը: Ահա հասաւ փորձութեան ժամը, երբ Հայաստանի որբ ժողովուրդը պիտի որոտայ իր թունոտ անէծքը. ապիկար ու շահամոլ հայութեան գլխին, որը ձգեց նրան լոկ յգագանակի հովանաւորութեանը՝:

Այո՛, այդ թշուառ, մորթուող ժողովուրդը իր արհաւիրակի գոյութեան ընթացքում շատ արդէն անիծեց իր արիւնարբու թշնամուն: Այդ անէծքները դարձել են այժմ բանալի տաղտկացուցիչ... Ի՞նչ խորհուրդ ունին նրանք, երբ արիւնակից եղբայրներն անգամ մեղակից են յայտնուում սուլթանական խողխողումներին՝ իրենց դաւաճան անզգայութեամբ դէպի գոհների աղիողորմ հաւարը...

Ի՞նչ փոթ մեր շայտ «հասարակութեանը», թէ այսօր թիւրքական եւթաղանի տակ գետին են փռուում հարիւրաւոր կեանքեր, արիւնակից կեանքեր: Ի՞նչ փոթ հայագրի կօսմօպօլիտներին, թէ հայ կանաչ ու աղջկաները մատնուում են թիւրք ղինւորների վաւաշտութեան, թէ դիւային խրախճանքների մէջ ծծկեր երեխաները բարձրանում են քրդական սուլինների վրայ. նրանց ի՞նչ փոթ, թէ Սասունը կ'ընկնի, թէ Մուշի ընդարձակ դաշտավայրը կը հրդեհէի ու կ'արիւնոտուի արիւնարբու վոհմակների ձեռքով... Նա ինքը հանգիստ է, հայ հասարակութիւնը, նրա խիղճը հանգիստ է, նա միշտ չէ՞ որ գարշել է արիւնից, միշտ Հայաստանի բարօրութիւնն է տեսնացել — սին. Փրագներով — միշտ դատապարտել է «խառնակութիւնները», ինչ ձեւի տակ էլ երևան գան նրանք, նա միշտ եղել է հ ա կ ա յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն: Նա գիտէ միայն քծնել ու սողալ բռնաւորների առաջ, նա գիտէ փառաբանել խանգաւառ ու հանդիսաւոր մաղթանքներ ուղղել ազգի դահիճներին, մոռացած երէկւայ անարգանքները, արիւնն ու արտասուքը... Օ՛, քարացած, զաղիր գոյութիւն, մեր յաւիտենական նախատիքն ես դու, միշտ կսկծացնող, երբէք մխիթարող...

Եւ սակայն լացի, ողբերգական հառաջանքների ժամանակը չէ: Տակաւին ստւար ենք յեղափոխականներս, որ տոգորւած վերջնական յաղթանակի գիտակցութեամբ, գրկախառնւած տանջող, հարազատ ժողովրդի հետ՝ պիտի

ձգտենք այդ յաղթանակին ինչ գնով էլ որ լինի: Հեռու վհատութիւնը — նոյնիսկ ներկայ ծանր օրերում. սկսած փոթորիկը, բոպէի ցնցող հանդիսաւորութիւնը թող չխուովեն մեր հոգիները և մի վայրկեան անգամ չկասեցնեն մեզ մեր ճանապարհից: Լինենք վճռական և միշտ պատրաստ՝ նորանոր հարւածներ տալու և ստանալու: Լինենք պաղարիւն, նման այն սրտոտ, խրոխտ հոգիներին, մեր թանկագին Փէդայի ընկերներին, որոնք Սասունի վեհապատե՛ կատարներին թառած՝ անվեհերօրէն պատարասուում էին թշնամու գրոհին, և որոնք գուցէ այս վայրկեանիս արդէն լեռնականների հետ թեւ-թեւի տւած՝ մղում են սրբազան ճակատամարտը...

Մեծ, զարհուրելի ոճիր է յղացել Աբդիւլ Համիդը: Վայրկեանը, ըստ երեւոյթին, թւում է նրան խիստ բարեյաղող. քաղաքական աշխարհը փոթորկւած, հանրային ուշադրութիւնը՝ կլանւած հեռու Արեւելքի անցքերով ազատ է Մարդասպանը... բայց այդ դեռ կը տեսնենք... Սասունը ընկճւած, Տարօնը աւերի ու սրածութեան ենթարկւած, Հայաստանի սիրտը փորփորւած և հայկական խնդիրը ջնջւած, — ահա գազանի փայփայած իդէալը: Բայց սուլթանական հոյակապ ծրագիրները այնպէս էլ կը մնան իդէալների աշխարհում: Հայ ժողովուրդը առասպելի հիգրան է, որի ամէն մի կտրւած գլխի տեղ՝ նորն է բսնում: Հայ յեղափոխական փորձամասնութիւնը, որքան էլ լքւած, որքան էլ հալածական, պիտի հետապնդէ իր սեփական իդէային. արեան գետերի և աւերակների տակից նա պիտի վեր բարձրանայ, աւելի ևս հուժկու, վրէժխնդիր, նա պիտի կուէ մինչև որ յաղթէ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Ուղղած «Դրօշակ»-ի խմբագրութեան)

Թիֆլիս, 9 մարտի

Թիւրք կառավարութեան հրամանով կանոնաւոր զօրքերը և քրդական աշիրէթները կենտրոնացել են Սասունի շուրջը և Մուշի դաշտում, ուր ոչնչացուել է Յուսան հայ գիւղը և ազգաբնակիչութիւնը ջնջւել է հրով ու սրով:

Աշիրէթները՝ խուլժ և խիանք կենտրոնացած՝ արդէն յարձակուել են Հազընքի, Հեղինի և Մազըէի հայ գիւղերի վրայ և Սասունի շրջանում՝ Մարշանտիէ (°) և Իշլընձոր գիւղերի վրայ: Դա սկիզբն է ընդհանուր կոտորածի. հայ ազգաբնակիչութիւնը յուսահատ վիճակի մէջ է:

Սալմաստ, 12 մարտի

Դրութիւնը ծանր է Մուշի շրջանում հարկահանութեան պատճառով, որ առաջ է տարւում բռնութիւններով ու սարսափելի անգթութիւններով: Յուսան գիւղը՝ յուսահատ՝ ստիպւած է եղել ընդգրկմանը: Սար-

սափը տարածել է մինչև Մուշ, ուր խանութները վեց օր շարունակ մնացել են փակված:

* * *

Թաւրիզ, 17 մարտի

Թիւրք կառավարութեան հրամանով զօրքերը համախմբուած են Սասունի հիւսիսային սահմանների վրայ գտնուող գիւղերում և Մուշի դաշտում, որտեղ յունւարի 27-ին զօրքերի և իսլամ ամբոխի ձեռքով աւերւելէ հարիւր տնից բաղկացած Յունան հայ գիւղը: Բնակիչների մի մասը սպանւած են, կանայք և օրիորդներ բռնաբարւած: Սասունի հարաւային և արեւելեան սահմաններում գտնուող Խուլֆ և Խիանք գաւառների աշէրէթները սկսել են աւերել իրենց հարեան հայ գիւղերը հրով և սրով: Ոչնչացրւած է յիսուն տնից բաղկացած Վանք գիւղը. Հեղին, Մէզոէ գիւղերն էլ թալանւած են և բնակիչների մի մասը սպանւած: Կառավարութիւնը բացարձակապէս գրգռում է մահմեդական ամբոխին և խրախուսում է զինւել հայերի դէմ: Ձմեռը վերջանալուց՝ սպասուում է ընդհանուր ջարդ-հայ ժողովուրդը սարսափի մէջ է:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ

Կ. Պօլիս, 8 մարտի

Սասունի մէջ հայեր և քրդեր յուզվունքի մէջ են. Բիթլիզից և Վանից եօթ զօրագունդ ուղարկւել են Սասուն:

Ձինորական միսիստը խնդրել է հայոց պատրիարք Օրմանեանին՝ ի գործ դնել իր ազդեցութիւնը՝ հանդարտեցնելու համար այդ շրջանի հայերին: Օրմանեան պատասխանել է, թէ ինքը այդ տեսակ ազդեցութիւն չունի, քանի որ կառավարութիւնը տարիներից ի վեր ամեն բան գործ է դրել՝ այդ ազդեցութիւնը ոչնչացնելու համար:

Կ. Պօլիս, 12 մարտի

Կառավարութիւնը հրամայել է ուղարկել չորրորդ զօրաբանակի մի բաժին՝ Սասունի շրջանի լեռներն ապաստանած հայերի դէմ:

Կ. Պօլիս, 16 մարտի

Հայոց պատրիարքարանը միջամտել է՝ Սասունում, ապստամբապետ Անդրանիկի հրամանատարութեան տակ հաւաքւած 400 հայերի օգտին: Այդ պատճառով Սասուն ուղարկւած ութ զօրագնդերը կանգ են առել Մուշում և դրւել են Մուշի հրամանատար Սալի փաշայի տնօրինութեան ներքոյ: Հայոց պատրիարքարանին յանձնարարւած է՝ բանակցել Սասունում հաւաքւած հայերի հետ, որ անձնատուր լինեն: Այդ նպատակով՝ Երզրզից ստանալով որոշ հաւաստիքներ — նա իբրև պատիրակ ուղարկել է Մուշի եպիսկոպոսին:

(Deutsche Zeitung)

Կ. Պօլիս, 16 մարտի

Ֆրանսիան, Անգլիան և գուցէ մի ուրիշ մեծ պետութիւն ևս մօտ օրերումս դիմումներ պիտի անեն՝ Սասունի մէջ և նրա շուրջը ապրող հայ ազգաբնակչութեան խիստ նեղ վիճակի առթիւ: Հայերի դրութիւնը պէտք է շատ ծանր լինի: Սասունի մերձակայքում հաւաքւած եօթ զօրագնդերը բռնել են հովիտը և մտադիր են յարձակում գործել Սասունի վրայ, հէնց որ, ձիւները հալւելով, կը բացւեն ճանապարհները: (Die Frankfurter Zeitung)

Կ. Պօլիս, 18 մարտի

Բիթլիզի վիլայէթի վիճակը անհանգստացնող է. նա աւելի ևս ծանրացած է շնորհիւ վարկաբեկ վալի, Ֆէրիդ փաշայի: Հայ ապստամբապետ Անդրանիկի Սասունի շրջանում գտնւելու պատճառով՝ երկիւղ կայ, որ քրդերը յարձակումներ գործեն հայերի վրայ: Բ. Գրան ցանկութեամբ, հայոց պատրիարքարանը պատրաստել է՝ բոլոր եպիսկոպոսներին ուղղելու համար՝ մի շրջաբերական, որով յորդորում է հնազանդ լինել սուլթանին և արտաքսել դրսեցի գայթակիւններին: Die Zeit

ՅՈՒՆԱՆԻ ԳԵՊԳԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

(Նամակով)

Մուշ, 28 փետրուար, 1904

Յունան գիւղը, որ կը գտնուի Նորչէնէն մէկուկէս ժամուայ տարածութեան վրայ, իսպառ ոչնչացած է հետեւեալ պարագաներում մէջ — Ուրբաթ օր, փետրուարի 5-ին, թուով 15 ժանդարմ կը մտնէին Նորչէն, դաշտի գիւղերուն մէջ հարկահանութեան պտոյտ մը ընտել յետոյ. անոնք կանգ առին Յունան գիւղը: Այնտեղ իմացան որ երեք դրսեցի հայեր ապաստանած են գիւղի մէկ տան մէջ: Ժանդարմները անմիջապէս սկսան բռնուն հրացանաձգութիւն մը դէպի յիշեալ տունը և միևնոյն ատեն մարդ խրկեցին Նորչէն և Մուշ՝ օգնական զօրք խնդրելու համար: Պաշարւածները պատասխանեցին և դրսէն ևս ուրիշ հայեր կրակ ըրին ժանդարմներուն վրայ: Վերջինները փախուստ տւին, պատսպարւելով գիւղի տներուն և մօտակայ գետի գոյացուցած խողոցներուն մէջ: Նորչէնի բերդապահ զօրքին մէկ ջոկատը օգնութեան գալով ժանդարմներուն՝ երկու հոգի վիրաւոր ունեցաւ և չհամարձակեցաւ առաջ երթալ:

Գիշերը վրայ հասնելով՝ դրսեցիները թուով մօտաւորապէս վեց հոգի, օգուեցան իրարանցումէն ու հեծնելով ժանդարմներու ձիերը, փախան դէպի յետը: Յունանի բնակիչներն ևս վախէն սկսան փախչիլ, չնայած առատ ձիւնին ու խիստ ցուրտերուն:

Լուրը արագութեամբ տարածւեցաւ, հասաւ մինչև Մուշ: Հայերը փակեցին խանութները և մօտան իրենց տները: Սակայն քիւրդ ու թիւրք խուժանը, որ երկար ատենէ ի վեր պատրաստութիւններ կը տեսնէր հայերու դէմ, մեծ բազմութեամբ սկսաւ վազել դէպի Յունան: Շատ չանցած գիւղը լեցուն էր խուժանով: Մտան անբուռ մէջ և սկսան կողոպուտն ու բռնաբարումները: Տարան ուտելիղէնը և բոլոր արժէքաւոր իրեղէնները, կոտորեցին կահ-կարասիքը: Թալանողներու, սպանողներու

մէջ ամենէն արիւնուուշարը Արար Ապդուլահան է, ապա կուգան ուրիշները՝ Սէրիմ, Մասո, Չաթօ, Հաջի Աւալ և իր տղան Սասգէտտին, Հաքվերտին, Շաքիր, Ալի, Մուսա, Քիւշիւկ աղա, Միսիկ Գուրսուն: Սպանութիւնները կատարած են ամենանորը բարբարոսութիւններով: Բազմաթիւ հայերու գլուխները ջարդուփշուր են եղած:

Կիներ բռնաբարեր են, առանց տարիքի խտրութեան, ոչ այնչափ կիրքէ, որչափ վրէժխնդրութենէ մղւած:

Առաջ կը բերենք զոհերու ցանկը, որ լիակատար չէ.

1. Լուսիկ, Ջինդոյի կինը,
2. Չինո, Ջիսգոյի կինը, 40 տարեկան,
3. Խուժար, Խաչիկի աղջիկը, 15 տ.,
4. Գօտէ, Մարտոյի կինը, 65 տ.,
5. Լուսիկ, Գօտէյի աղջիկը, 8 տ.,
6. Սանամ, Գիրգորի կինը,
7. Գիւլգաս, Գիրգորի հարսը, 20 տ.,
8. Ֆինտօ, Խարցի կինը, 90 տ.,
9. Մարիամ, Ֆինտօյի հարսը, 20 տ.,
10. Հօրուն, Սաքոյի կինը, 18 տ.,
11. Սարէ, Մէլոյի կինը, 50 տ.,
12. Հալսօ, Խարբարի կինը, 35 տ.,
13. Հօրուն, Եղջի կինը, 45 տ.,
14. Բայաղ, Աղոյի կինը, 50 տ.,
15. Գիւլօ, ՕՏանի հարսը, 19 տ.,
16. Եխսիկ, Ավգալի կինը, 55 տ.,
17. Մարիամ, Ավգալի հարսը, 20 տ.,
18. Ասբիկ, Գիրգորի կինը, 35 տ.,
19. Մարիամ, Քիսգիպի կինը,
20. Լուսիմ, Աւհի Մեղիքի կինը, 20 տարեկան:

Հապճեպ փախուստի միջոցին, շատ մը խելակորոյս ծնողներ ձանձան թողուցած են իրենց զաւակները, որոնք յետոյ գտնւեր են բոլորովին ս ա ո ա ծ: Յայտնի են առայժմ.

- Աղուլթ, Խաչիկի աղջիկը, 3 տարեկան,
- Խուժան, Հուղոյի աղջիկը, 3 տ.
- Գուրգէն, Գիրգորի տղան և այլն:

Չօհերու ճիշտ թիւը տակաւին յայտնի չէ:

Քիւրդերու և տաճիկներու կողմէն սպառնալիքները կը շատնան, իսկ կառավարութիւնը, ըստ իր սովորութեան, ազատ կը թողու անոնց, կամ բացարձակապէս կը գրգռէ: Մուշի առաջնորդը և վիճակի հօգևոր ու մարմնաւոր խորհրդի անդամները հեռագրած են սուլթանին՝ սպառնացող վտանգի մասին. այժմ Բիթլիզի գատանտանական իշխանութիւնը հրաման ստացեր է պատասխանատուութեան կոչել անոնց՝ զրպարտութեան, չարամիտ ամբաստանութեան համար:

Գ Ի Մ Ո Ւ Մ Ն Ե Ր

Գրգւած Սասունից եկող ծանր լուրերից՝ Ֆրանսիական պարլամենտի մի քանի հայասէր անդամներ՝ անմիջապէս մինիստր Գելկասէի ուղարկութիւնը հրաւիրեցին սպառնացող աղետի վրայ: Միաժամանակ «Հ. Յ. Գաշնակցութեան» Արևմտեան Բիւրօն՝ հեռագրելով պ. Գելկասէին, դէպքի մանրամասնութիւնները, ինչոքեց ազդու միջամտութեան նախաձեռնութիւնը ստանձնելը Հանրապետութեան արտաքին գործերի մինիստրի և Լօնդօնի ու Հռոմի կաբինէտները միջև, լուրերին նայելով, այդ առթիւ բանակցութիւններ են սկսած:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Մ Ո Ւ Յ Է Ն

9 յունւար, 1904

Աերջերս կառավարութեան հրամանով արգիւեցաւ հայ գիւղացիներուն՝ մութ կոխելէն ետք իրենց տուններէն դուրս գալ, ու ասի գողերուն ձանապարհ բացաւ՝ իրենց գիշերային շահատակութիւնները կատարելու:

Կառավարութեան շարժումներէն կ'երևի թէ, նոր աղետներ կը սպասուեն մեզի:

Ջինուորական հրամանատարը տարաձայնութիւն մը հանեց թէ, Փէդայիները դաշտ իջած են զօրքերու վրայ յարձակելու: Այժմ զօրքերը կուտակւած են դաշտի Խասգեղ, Սուլուղ, Կառնեն, Նորչէն և Աւազ հայ գիւղերու մէջ ու ծայրայեղ կերպով կը ճնշեն հայ գիւղացիին: Գիշերով բռնի կը մտնեն տուներ և կը բռնաբարեն հայ կիները: Սուլուեցիները դիմեցին հրամանատար փաշային, սակայն սա վնասեց՝ անոնց բողոքներուն կարևորութիւն չտալով:

Քօմիսէր Հիւսնին, որ ղրկւած էր դաշտ ստուգելու թէ, ճի՞շդ է այն տարաձայնութիւնը, թէ հայերը կը զինւին ապստամբութեան համար, վերադարձաւ Մուշ առանց ուէ ապացոյց գտնելու կառավարութեան հնարած այդ սուտի մասին. սակայն, որովհետև հայերը ճնշելու տրամադրութիւն մը կայ, իր տեղեկագրին մէջ յայտարարած է թէ, հայերու այդպիսի մտադրութիւն մը ունենալը ստոյգ է:

Աւ այժմ լուր կը պտտի թէ կառավարութիւնը ձմեռայ խստութիւններու հետ պիտի սկսի հայ գիւղերը խուզարկել: Ով որ ծանօթ է թրքական ըէժիմին, գիտէ, թէ ինչ կը նշանակէ խուզարկութիւն: Ծեծի տակ մեռնողներու և կողոպտւած տուններու թիւը պիտի շատնայ...

Ն Ա Մ Ա Կ Խ Ն Ո Ւ Ս Է Ն

10 յունւար, 1904

Չերբակալութիւնները և սպանութիւնները վերսկսւած են:

Վորալ գիւղացի Տէր Աւետիսի կինը և երկու որդիք Գևորգ և Յակոբ Ղարաչօպան գիւղէն վերադարձին՝ կը հանդիպին համիրիէ գայմազամ Թաթտինի ծառաներուն, որոնք կեղծ բարեկամ ձևանալով, կ'ընկերակցին առաջիններուն. սակայն կէս ձանապարհին կը յարձակին Գևորգի և Յակոբի վրայ կը սպաննեն, իսկ մայրը, որ ուշաթափ ինկած էր՝ կը կողոպտեն: Չարագործները տարած են մօտ 100 ոսկիի արժողութեամբ իրեղէններ: Ոչ ոք չհամարձակեց կառավարութեան դիմել, որովհետև նախ կառավարութիւնը ոչ մի կարևորութիւն չպիտի տար եղած դիմումին և երկրորդ՝ դիմումով գրգռած պիտի ըլլային քրդերը՝ նոր չարիքներ գործելու:

Տեղական կառավարութիւնը այլևայլ պատրակներու տակ անօրինակ բռնութիւններու ենթարկեց Չէվլիմէ, Արօս, Խօղլու, Խըրտեհահին և Ղարաչօպան գիւղերը: առանց հարցաքննութեան կը ծեծէին և կիսամեռ կը թողնէին, որու որ հանդիպէին: Այս առթիւներով ձեր-

բակալած են խօզընէն Մուրէեան Գասպար, Կօշտօ և 2աջան: Ղարաջօպանէն պ. Սիմէօն, Արթին և ուրիշներ, խըտրէն՝ Հրատ և 2եվիլրմէն՝ րէյս Առաքել և Մանուկ աղան:

Այս է մեր ներկայ վիճակը:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ա Ն Ա Յ Է Ն

10 փետրւար, 1904

Ատանայի կուսակալութեան մէջ 200 տուն գաղթական կրէտացի տաճիկներ կան, որ Կրէտէի դէպքին առեն այս կողմերը գաղթեցին, ասոնցմէ 50 տունը Մէրսին, 50 տունը Թարսուս և 100 տունը Ատանայ Տաստաւած են, բոլորն ալ գող ու աւազակ:

Հիմայ կառավարութիւնը սկսեր է գաղտնի կերպով ասոնք զինել. ամէնէն աղքատը, որ իր տան մէջ հաց ու ուտելիք չունի, երկու-երեք հատ զէնք ունի և շուկան ծախւած ամէն զէնքերը ասոնք ծախու կ'առնեն: Կառավարութեան միտքը աղէկ է. ասոնց դիտմամբ նա բերաւ որ ապագային իրեն պէտք գան, քրիստոնեաները ջարդել տալու: Բոլորն ալ երիտասարդ սրիկաներ են, միշտ զինւած. իրենց տունները քաղքէն դուրս առանձին տեղ են, զոր կառավարութիւնը իր ծախքով շինել տւած է: Գիշեր ժամանակ մարդ չի կրնար այն կողմ երթալ. կը կողպտեն կամ կըսպաննեն և ոստիկանութիւնը չի ձերբակալեր, ազատ կը թողու: Հայոց գերեզմանոցի բոլոր քարերը գողնալով տուններ շինած են. կառավարութիւնը ծածուկ զէնքեր կը բաշխէ այդ վայրենիներուն...

Մինակ հոս, Ատանայի կուսակալութեան մէջ չէ որ բռնութիւններ կը կատարին: Տինիքեար ըսւած գիւղին մէջ անցեալ շաբաթ հայ կօշկարար մը մեռցուցին. խեղճ մարդը հազիւ հազ իր ընտանիքին ապրուստը կը ճարէր: Թիւրքի մը հետ սակարկութեան ժամանակ կը գտուի և թիւրքը բարկանալով ոտքով հարւած մը կուտայ խեղճ մարդուն ամորձիքներուն, կը ձգմէ զանոնք. զոհը մարած կ'իյնայ և մէկ օր վերջ կը մեռնի: Այս տեղէն պէլէտիյի տօթէտը և կառավարութեան պաշտօնեայ գացին զայն քննելու: Գացեր են և ըսեր են թէ մարդը ինքնիրեն պաղարսք տէօնմէսիյէն մեռեր է. ըբօրդ մը տւած են և թողած: Կառավարութիւնը չի հարցուց թէ, ով ըրած է, վասնզի մեռնողը քրիստոնեայ և մեռցնողը տաճիկ մ'է:

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Լ Ա Թ Է Ն

1 դեկտեմբեր, 1903

Նոս տուրքը. — Մանկացած կառավարութիւնը, իր անկուշտ փորը լեցնելու համար, ժողովուրդը կեղեքելու, կողպտելու նոր միջոց մը ստեղծած է — տուրք առնել բոլոր անասուններէն:

Մինչև հիմայ սահմանւած տուրքերը միշտ նպատակ ունէին քրիստոնեայ տարրը ճնշել, անոր գրպանը պարպել, սակայն այս անգամ, բարեբախտաբար, ցաւը ընդհանուր էր, իսլամն ալ զգաց ու զայրացաւ:

Աւազակ կառավարութիւնը երբ տեսաւ թէ հայն ոչինչ չունի այլևս, նրա ամբողջ ունեցածը իր ծակ

գրպանի մէկ պուճախն անգամ չլեցնէր, ստիպեցաւ կողպտել բոլորին, չեմայելով իսլամին, անգամ:

Ու ասի լաւ է:

Մինչև հիմայ թիւրք տարրը, կրօնական նախազաշարման, տակ, շատ չէր դժգոհէր իր փառաշահէն — նա Ալլահի փոխանորդն է, նրա կարգադրութեան հնազանդելու է — և ինչո՞ւ չհնազանդի, երբ փառք քրիստոնէին էր, իսկ այժմ, երբ ինքնին աղքատ թիւրք երկրագործը կամ իշապանը կը տեսնէ իր զաւկըներու բերնէն հացը կը խրեն, սովամահ կը ձգեն, Ալլահի շուքին ու անոր տգորուկ ձագուկներուն յագուրդ տալու համար, երբ կը տեսնէ թէ իր քրտինքի արդիւնքը դատարկապորտ ձրիակերներու կողորդը կ'անցնէ, ալ չի կրնար հանդուրժել, բողբի ձայնը ինքնին կը ծնի և կ'ուռձի իր մէջը:

Ու այդ բողբի ձայնը բարձրանալ սկսած է այժմէն: Տասը օր առաջ կառավարութիւնը ձեռնարկեց անասունները գրելու և որովհետև քէօջարները դէպի վար գաղթելու վրայ էին՝ թէ կը գրէր անոնց անասունները և թէ տուրքն ալ անմիջապէս կը գանձէր: Մի օր Բաղէշի շուկայի մէջ կը բռնեն մի քէօջար կին ջորիով մը միասին, կը պահանջեն որ ջորիին համար 15 ղըշ. վճարէ: Կինը կը դիմադրէ. կ'առնեն կինը և ջորին ու կ'ուղղին դէպի կառավարատունը: Կինը ճանապարհին բարձրաձայն կը կանչէր՝ «Ալլահ, դուն Ֆէդայիներու գործին յաջողութիւն տա. ո՞ր ես Մօսկով, շուտ արի կործանէ Համիդի թախտը»:

Վը լսեմ թէ Մշոյ դաշտի քրդերը երգմամբ միացած են չվճարել այս նոր տուրքը:

Խելացնոր կառավարութիւնը փոխանակ ժողովուրդի բարեխաղութեան, զարգացման, յառաջադիմութեան և հարստանալուն վրայ մտածելու, այդ մասին միջոցներ ստեղծելու, — գիշեր ցորեկ կը մտածէ թէ, ինչ նոր տուրք կրնայ ստեղծել:

Բնական է որ արնքամ եղած ժողովուրդը, լինի իսլամ կամ քրիստոնեայ, մի միջոց պիտի մտածէ իր օձիքը ազատելու և ի՞նչ ուրիշ միջոց մնացած է, եթէ ոչ ըմբոստութիւն:

Նորուժ իւններ. — Չսխալիք, մեր երկրի մէջ նորութիւն չկայ — տուրքերու տեսակէն զատ — նորութիւններ ըսելով նոր պատահարներ ըսել կ'ուզենք:

Քանի մը օր առաջ Ծղակ գիւղին մէջ մի թիւրք կը զարնէ կըսպաննէ մի հայ, որ իրեն մրիպայ էր: Թիւրքը, որ բաղէշի մըն էր, կը փախչի Ծղակէն իր տուն կը գնայ և... կ'ազատի օրէնքի տրամադրութենէն:

Միջանկեալ — ըսեմ, եթէ մարդասպանը հայ ըլլար, մինչև Եւրօպայ ալ փախչելու ըլլար գէթ անւանական վճիռ մը կ'ընդունէր: Քանի մը տարի առաջ Բաղէշ բանտէն քանի մը հայ փախան. կառավարութիւնը երբ չկրցաւ փախստականները ձեռք բերել, ի բացակայութեան 101 տարւայ վճիռ տուաւ և շրթայեց բանտի այն քարերը, որ պատէն փրցած էին փախչելու համար: Քարն անգամ քայքայուր է, երբ խնդրը հաջուն կը վերաբերի:

Նոյն Ծղակ գիւղի ուէս Սողոյին գիւղին միւլթեզիմը այնքան կը ծեծէ, որ հազիւ մահէն ազատեցաւ:

Կեւակ գիւղի մէջ քանի մը ոստիկաններ դրւած են: Թիւրքական վաւաշտութեան հաւատարիմ, տունէ տուն կը պատին իրենց լպիրշ կրքերէն մղած: Գիւղին գրա-

գիրը, Յակոբ, գործը ծայրայեղութեան հասած անսնելով օրին մէկը մեղծօրէն կը զգուշացնէ լսիր շնորհը, որ լրբութիւնին չշարունակեն: Սատիկանները կը կատարին, միացած կը յարձակին Յակոբին վրայ, լաւ մը կը ծեծեն և կը բռնեն կը ճամբէն Ախլաթ, շարաթ մըն ալ բանտ կը մնայ, ապա կ'ազատի:

Նորերս Բաղէշի Աւելմէյրան թաղին մէջ, թիւրքերը կը մտնեն հայու մը տուն և կը մորթեն ամբողջ ընտանիքը՝ երկը, կնիկը և երեք զաւակները: Կառավարութիւնը վրան անգամ չէ հարցուցած, բայց մի բարկանաք, անպատճառ կը հարցնէ: Մէկ-երկու օր պէտք է անոր համար մտածելու թէ, ո՞ր հարուստ հայու օձիքն բռնէ ու կ'է: Որքան կ'ուզէ Եւրօպան թող բարենորոգումներու ծրագրով օրօրէի, մենք հոս չարանորոգումներու ենթակայ ենք, հոս սպանութիւններ կողպատումներ, կեղեքումներն են որ կը նորոգւին ու կը կրկնուին:

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Յ Ա Ջ Է Դ Է Ն

20 դեկտեմբեր, 1903

Սպասողական վիճակ.— Ամենքն այստեղ սպասողական վիճակի մէջ են... Սպասում է արիւնը ու շտապի կառավարութիւնը, որ պատեհ թողնէ գայ և նա ամէն բան տակն ու վրայ անի: Սպասում են քիւրդ ու համիդիէն, որ տաճիկը առիթ տայ և նրանք համարձակ սկսեն իրենց թալան-թուրանը: Սպասում են չեքեքն ու մուհապարը, որ սուլթանից հրաման լինի շուտով և նրանք իրենց տուն ու տեղը ապահովեն հայի կայք ու գոյքով: Սպասում է և առնչած ու վրէժխնդիր հայը, սպասում է այն օրին, երբ կը կարողանայ վերջ դնել իր անել վիճակին: Նա կը դիմէ յուսահատական միջոցներին... կը մղէ անհաւասար կռիւ, կը կռի իր ունեցած բոլոր միջոցներով: Թէկուզ լինի իր մատնեի եղունգներով, կը կռի որքան իր ուժերը կը ներեն և որքան նա կ'ենդանի է: «Թող քանդուի, թող փուլ գայ — ասում են միաբերան — և մենք խաղաղ ու հանգիստ կը ննջենք աւերակների տակ»: Ահա այս է ներկայումս Թիւրքահայաստանի հայ ժողովուրդի կացութիւնն ու տրամադրութիւնը:

Նոր տուրքը եւ քրդերի խլրտումը.— Կառավարութիւնը ձգնում է յեղափոխական հնոցի կրակը հանգցնել, բայց իզուր: Նոր-նոր տուրքեր են ստեղծուած եղածները բաւական չէին, այս անգամ էլ մի ինչ որ տուրք սկսեց հաւաքել — արտաքոյ կարգի — պատրուակ բռնելով Մակեդոնիայում սպանած ոռու հիւպատոսի արեան տուգանքը: Հաւաքեց այսպէս. իւրաքանչիւր ձիու, ջրու, եզան, գոմէշի և եզի գլխահարկ 10-ական դուրուշ, իսկ էշի համար, որին խաթր է արել 3 դրշ: Յաճիկ պաշտօնեաները բաւական իւղուեցին, ոռոճիկ չէին ստանում, այս անգամ կենդանիների գլխահարկը առիթ տուց և նրանք իւրաքանչիւր գիւղից բաւականաչափ փողեր ստացան և լաւ քէյֆ քաշեցին՝ կերան, խմեցին, խաղացին, ուզած կաշառքն էլ առին. մի քանի գիւղերից, ակա՛նատես էի, վերցրին 50 տաճկական ոսկի, «Ալլահ բարաքեթ վերսին» ասելով: Չարմանալի բան, — այդ տուրքը հաւասար դրեցաւ, քիւրդն էլ հայի հետ տուժեց, նա տեղ-տեղ ընդդիմացաւ, մի քանի տեղերում դէպքեր տեղի ունեցան, բայց աննշան: Եղած ցոյցերը թոյլ էին,

միայն 3-4 պաշտօնեաներ վերաւորեցին, մի քանի զինւորներ ծեծեցին ու մի քանի էլ քիւրդեր վերաւորեցին, այսպիսով գոցեց խնդիրը: Յաճիկները իրենց յատուկ խորամանկ միջոցների դիմեցին, սրան ու նրան իրենց կողմը քաշեցին, մէկին զիջում արին, մէկի հետ բարեկամացան և միւսին էլ հէրը անհծեցին, այսպիսով իրենց գործը կարգի դրեցին. քրդերը էլի մնացին իրենց հա «բաք բաք»-ի մէջ: Տիրում է խորին լուռութիւն և լուռում են անէծքներ...

Այսպէս, նոր տուրքի խնդիրը կարգադրեց, բայց էլի մնում բակիայի — Հին մնացորդ տուրքերի գանձումը, որի համար էլ խիստ հրաման կայ և անպայման պէտք է հաւաքել այս տարի: Յաճիկ պաշտօնեան կորցնում է գլուխը. մի կողմից զօրք հաւաքել, միւս կողմից՝ տուրք, միւս կողմից էլ՝ ֆէդայու վախն ու սարսափը, — այդ բոլորը շփոթեցնում է նրան:

Յաւիտենական ինտրիգներ.— Թիւրք կառավարութիւնը այժմ աւելի լուրջ ու աւելի հետաքրքրական մի խնդրի շուրջն է պտտուած: Նա բանակցութեան մէջ է քիւրդ ցեղերի ու համիդիէների հետ, որ սրանք ուխտեն ու յանձնառու լինեն ֆէդայիներու դէմ կռուելու, հայկական շարժումները ճնշելու և կրկին Հայաստանը աւերելու և վերջնականապէս ընկճելու մնացորդ քեաֆիրներին էլ, բայց քիւրդն ու համիդիէն տատանում են...

Քիւրդ շէյխը քմբոստարում է.— Պաշտօնական դիմում եղաւ ջալայի աշիրէթի Շէյխ-Հասան համիդիէի գայմագամին, որ զինւի և ոռու սահմանի վրայ կանգնի իր ցեղով՝ ֆէդայիներից երկիրը պաշտպանելու համար, բայց Շէյխը մերժեց, իր դժգոհութիւնը յայտնելով զենքերի հաւաքման, նորանոր տուրքերի գանձման առիթով. «մենք չենք գնում, թող թիւրք զօրք գնայ և անելիքը անի»: Շէյխի այս պատասխանը ստանալով՝ կառավարութիւնը անմիջապէս զօրք ուղարկեց ու կալանաւորեց նրան, այժմ նա գտնուում է Այաշկերտի Գարաքիլիսէի բանտում:

Միւս կողմից կառավարութիւնը ծանր երկպառակութիւններ է ձգել այդ սահմանաքնակ ջալայի ցեղի մէջ, որոնք շարունակ իրար դէմ կռուում են: Յարդ սպանած են 25-ից աւելի մարդիկ, դեռ շարունակուում է վրէժխնդիր կռիւը:

Միշտ Սասունի դէմ.— Գրդ բանակի հրամանատար Ձէքին բանակցութեան մէջ է հէյտարանցի ցեղապետ Բէօն Հիւսէյն փաշայի հետ, որ սա յանձնառու լինի պատե՛ել ապստամբ Սասունն ու Տալուրիկը: Հիւսէյն ձգձգում է, զանազան պահանջներ դնելով: Նա պահանջում է 2,000 մաւզերի հրացան ու դրա համեմատ մթերք, որպէս զի կարողանայ իսպառ ջնջել քեաֆիր ֆէդայիներին: Թիւրք զօրքերը գաղտագողի քաշում են դէպի Սասուն, այնտեղ — ասում են թիւրք պաշտօնեաներ — ֆէդայիները թիւրք զօրքերի առաջ բացարձակ զինավարժութիւններ են անում. «բայց քանի որ բարձրագոյն հրաման չկայ, յարձակում չենք գործի և հանգիստ կըսպասենք»...

Քիւրդը քիւրդի դէմ.— Սահմանագլուխները ևս խաղաղ չեն: Նորերս ընդհարումներ եղան պարսիկ և թիւրք զօրքերով խառն քրդական աշիրէթների միջև. Մակալ Թէմուր խանի որդին խորամանկութեամբ թալանեց պարսկահայտակ մի քիւրդ ցեղապետի և բռնեց նրան իր տուն-տեղից: Գրա պատճառով աշիրէթները միացած տաճկասահմանաքնակ զօրքերի ու քրդերի հետ՝ յարձակեցին Մակալ Չալգերանի մասի վրայ, բերին մեծ

քանակութեամբ թալան—դէլտար, տաւար և շն, աւերեցին գիւղեր և սպանեցին 30-ից աւելի մարդ, որոնց մէջ կային մի քանի սէյիդներ ու վաճառականներ. Այս դէպքից յետոյ պարսկասահմանաբնակ քիւրդեր՝ հէյտարանցի, բուռլցի, մուսկի և լի ջեղերից՝ 750 տունից աւելի գաղթեցին դէպի տաճկական սահմանները և այժմ տեղաւորուած են Յապաղայի ու Բայազէդի շրջանում, իրենց ցեղապետները մօտ:

Միև կողմից Հէյիս Իպատուլահի ժառանգների արարքներն են խրախուսում ու գրգռում քիւրդ ցեղերին, որպէս թէ նրանք Պարսկաստանի Արմիայի շրջանում մեծ յաղթութիւններ են տարել. շատ գիւղեր են գրաւել. թէ որքան ճիշդ է, չգիտեմ: Քիւրդերը այժմ առհասարակ մտածում են տաճկական ինտրիգներից ու ապագայ ճշմարտութիւններից ազատելու համար միջոցներ ձեռք բերել. որոշել են կարծես կուել պարսիկների դէմ և գրաւել Պարսկաստանի շրջանում իրենց համար յատուկ հող. վերջերս քիւրդ ցեղապետները նիստեր ունեցան մի քանի անգամ և այդ հարցը քննեց շոջափուել է այդ ժողովներում: Քիւրդերը ասում են՝ «պարսիկները թող են, պիտի աշխատենք նրանցից օգտուել»: Կարծես հէնց այդ պատրուակներով ու նպատակներով էլ Հէյիս Իպատուլահի ժառանգները գործի են սկսել Արմիայում:

Առնւանգումներ.—Մօտերս Ալաշկերտում պատահեցին հետեւեալ դէպքեր.—Յամատ գիւղից երկու քայրեր առևանգեցին տեղւոյն հազարապետ Խալիս էֆ. ձեռքով: Մեծ քայրը՝ Քիշմիշ Հիփսեան՝ ամուսնացրին խմբի գրաւէտ Տուսուսնի հետ և մի քանի օր առաջ Կարին տարին. փոքր քայրը 11 տարեկան է և այժմ գտնուում է հարիւրապետ Քէլիսի պէյի տանը. դեռ ևս դրան թըրքացնելու իրաւունք չեն տւել, փոքր լինելու պատճառով:

Գարաքիլիսէյում հայ ոստիկան՝ Նահապետի կին Գուլօ Հլօեան, 15 տարի ամուսնացած, թըրքացրին. և ամուսնացրին Քանկի Հասան Մարսուտի ծառայի հետ: Նշոյ վարդիկեանին, Երանոս գիւղից, 12 տարեան ամուսնացած, տարել է 19-րդ զօրաբանակի մէջ գտնուող Հասան էֆ. և այժմ Հասանդալայում է գտնուում:

* * *

Օրէցօր աւելի և աւելի զգալի է դառնում է նիւթական ու բարոյական անկումը... Բոլոր ասպարէզներում — ծայրայեղ յուսահատութիւն. ամէնքն էլ կեանքից ձանձրացած՝ մի վախճանի են սպասում. ընդհանուր կոտորածներից յետոյ երկրի վիճակը ոչնչով չի փոխւել. մնացած հայ տարրը ընդհանուր պէտք սպասում է նոր ջարդերի, որոնք դամոկլեան սրի պէս կախ են ընկած իր գլխին...

Ն Ա Մ Ա Կ Կ Ե Ս Ա Ր Ի Ա Յ Է Ն


25 յունւար, 1904

Խոշոր վաճառական Մարսուտ Խազըճեան անունով հայու մը, որ կառավարութեան բոլոր պաշտօններում հետ լաւ յարաբերութիւն ունէր և անոնց տուներու պէտք եղածները բոլորը ինքը կը հայթայթէր, անցեալ օրը միւթէսերիֆը լուր ղեկած էր, որ իր տան համար պէտք եղած մի քանի ասպարէզներ ղեկէ, 5 ոսկի արժողութեամբ: Մարդը գիտնալով որ ինչ որ միւթէսերիֆը ծախու կ'առնէ ստակ չի տար, պատասխան կուտայ, թէ

առանց ստակի չեմ կրնար տալ, առաջան պարտքն ալ այնպէս մնացեր է: Միւթէսերիֆը բարկանալով՝ հոն գտնուած Կեսարիոյ գազաններէն Նաֆիս Թալասօղուն կը ղեկէ իր որդու հետ, որոնք գալով խանութի առջև՝ «դուք մեր միւթէսերիֆին ասպարէզ չէք տայ» ըսելով՝ երկուսով լաւ մը կը ծեծեն և դաշոյնով մի քանի տեղէ ալ թեթեւ կերպով կը վիրաւորեն: Մարդը մի քանի շաբաթ պառկելէ վերջ գործերը լմնցուցած է և կ'ուզէ հիմայ Մէրսին երթալ գազաններուն ձեռքէն ազատելու համար:

Կեսարիոյ մէջ գտնուող երկու մեծ ու ընկերացած հայ վաճառականներ՝ Արդին Սարեան և Յակոբ Սիլիփճեան, որոնք Եւրօպայի և Ամերիկայի հետ մշտական յարաբերութեան մէջ են, քաղաքին մէջ բողոք գործարան մը ունին. յիսունի չափ մարդ և աղջիկներ կ'աշխատին գործարանի մէջ և բաւական ալ մեքենաներ բերել տւած են Եւրօպայէն: Իրենց բուրդը հոն գտնուած կապախներէն կ'առնեն եղեր, և բոլոր կապախները երկու ընկերութիւն ըլլալով, այս մարդիկ միշտ մէկ ընկերութեանէ ծախու կ'առնեն եղեր: Այս անգամ մրցում մը ըլլալով երկու կապախ ընկերութիւններու մէջ միև ընկերութիւնը աւելի աժան տալու խոստում կուտայ, և այս մարդիկը իրենց ընկերութեան կապախը կանչելով՝ կը յայտնեն, թէ «միև ընկերութիւնը աւելի աժան կուտայ և մեծ տարբերութիւն կայ ձեր և անոր տւած բողոքուն մէջ», կ'ողակեն որ ասոնք՝ այլ նոյն գնով տան: Ասոնք չեն ընդունիր, այս երկու հայերն ալ միև ընկերութեանէն ծախու կ'առնեն և կը լմնցնեն իրենց գործը: Երբ սրնտուկներով պատրաստ պիտի ղեկեն, հետեւեալ օրը, առտու, յանկարծակի միև ընկերութեան կապախները, 5(1)-ի չափ, որ իրենցմէ ծախու առած չէր, այս երկու հայերու տան վրայ կը յարձակին. դուռը կոտորելով ներս կը խուժեն, սնտուկները կոտորելով բոլորն ալ կը կողոպտեն և մարդիկը կը փնտոեն մեղացնելու, բայց չեն կրնար ձեռք ձգել, արդէն տանիքէն փախած ըլլալով, և տունն ալ կը կողոպտեն. 200 ոսկիի չափ վնաս կար կը կենայ, ուրախանալով իր կրօնակիցներու ըրածին վրայ: Կեսարիոյ վիճակը անտանելի է. հայերը մտադիր են գաղթել:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն



Ձէնք ի ձեռին, իր երկու կորիւններու հետ, ինկաւն Բասենի վեջին կորիւններուն մէջ: Տիպար մշեցի էր ինքը, Մշոյ դաշտի Սուլուխ գիւղէն, 40-45 տարեկան, պարթև հասակով պնդակազմ ու սրտոտ: Գիւղին հարուստներէն էր, ազդեցիկ թէ գիւղացիներու և թէ կառավարութեան հանդէպ: Կը յարգէր շրջակայքի բոլոր հայերէն: Դեռ Սերոր-Աղբիւրի օրով նա գրկեց յեղափոխութիւնը, մտաւ Հ. Յ. Գաշնակցութեան դրօշին. տակ ու սկսեց կազմակերպել իրենց և շրջակայ գիւղերը: Յաջողութիւնը անսպասելի էր:

Անոնցմէ չէր Սերոբ, որոնք ամէն բան յեղափոխու-
թեանէն կըսպասեն, առանց իրենց մասնակցութեան, թէև
միշտ յեղափոխականի անուն կրելով: Սկզբի օրէն ուզեց
իր գրացիներուն հասկցնել թէ, յեղափոխական եղողը
պէտք է զինուի: Այն օրերուն մէջ, երբ ամէն հայ, հա-
րուստ կամ աղքատ, կ'ակնկալէր թէ, «Նկերութիւնը»
իրենց զէնք պիտի տայ, Սերոբ ջախջախեց այդ ակնկա-
լութիւնը, ինքն իր սեփական զէնքը գնելով:

Գիւղին խմբապետն էր, ու իր խօսքը վճռական էր
ամէնքին համար: Յարգանքը որ ունէին գիւղացիներ
դէպի բարեսիրտ Սերոբ, պատկառանքի փոխած էր՝ անոր
յեղափոխութիւն ընդգրկած օրէն: Կը բաւէր որ «Ձար-
կէք» խօսքը դուրս գար անոր բերանէն, — ամբողջ գիւղը
բիրերով զինւած կը կատարէր անոր հրամանը, թէկուզ
այդ ըլլար կառավարութեանը կամ զօրքին դիմագրեր:

Քանիցս հասարակ զէնքերով զինւած գիւղական խմբով,
ընդհարուսներ կ'ունենայ չէրքէզներու և քրդերու հետ:
Այս կռիւներու ազդեցութիւնը այնքան մեծ կ'ըլլայ, որ
այլևս քիւրդ կամ չէրքէզ չհամարձակիր Սուլուսի մէջ
գիշերել և գիւղացիները կ'ազատին չորս կողմէն թրթուրի
պէս թափող այդ ձրիակներէն: Եթէ մի քիւրդ աղայ
կամ պէյ պատահմամբ գիւղը հանդիպէր՝ նախ պարտէր
երթալ Սերոբի մօտ, հրաման ստանար, ապա ձիէն իջնէր
հանգչելու:

Կառավարութիւնը սուլուսիցիներու ըմբոստ ընթացքէն
կասկածած էր թէ «բան մը կայ» հոն. մի քանի անգամ
խուզարկած էր գիւղը, բայց ոչինչ չէր գտած: Սակայն
Սերոբը իբրև գիւղին հարուստներէն մէկը, ամենածանր
նիւթական վնասներ կրած էր այդ խուզարկութիւններէն:

Մի անգամ կը բանտարկեն զինք, բայց կը յաջողի ամե-
նակարող դրամի զօրութեամբ դուրս գալ բանտէն:

Երթալով կասկածը կը շատնար: Օրաուր կը պարզէր
կառավարութեան աչքին Սերոբի քաղաքական գոյնը.
սակայն որովհետև շատ վարպետ կը շարժէր Սերոբ, ոչ մի
իրական փաստ չկար, որով կարելի լինէր դատապարտել
անիւ ճարը կտրած կողմնակի միջոցներու կը դիմէ կա-
ռավարութիւնը, կ'ամբաստանէ թէ, զէնք գնած բաժնած
է գիւղի երիտասարդութեան:

Սերոբ երբ տեսաւ թէ, իր սրտին վառ զգացումները
վերջիվերջոյ թրքական բանտին խորերը պիտի փտին,
1901 թւի յունւարին ծախեց ունեցածի մէկ մասը, վեր-
ցուց իր երկու որդիքը և իր զէնքը, բարձրացաւ Սասուն
Անդրանիկի մօտ: Շատ կարճ կեցաւ հոն: Գաշտեցիի
ցաւերուն հետ կապւած, նա չէր կրնար հեռու մնալ
անկէ: Իջաւ դաշտ և գիւղէ գիւղ շրջելով առաջ կը
տանէր պրօպագանդը: Սակայն երբ խուզարկութիւնները
խստացան, որոշեց քաշել դէպի Ախլաթ: Յետոյ հե-
ռաւոր ընկերներ տեսնելու բաղձանքով՝ 1902 թւին իր
որդոցմով կ'անցնի Վովկաս:

Քանի կը հեռանայ իր ծննդավայրէն, այնքան աւելի
խոր կըզգայ անոր վիշտը: Ու երբ 1903-ի ամառը կը
լսէ թէ «Շանթ» դաշնակցական խումբը երկիր պիտի
անցնի, իր ձագուկները առած կը դիմէ կարգադիր մարմին,
ու արտասուելով կը թախանձէ որ զինք ալ զօգնէ: Ազա-
տութեան ծարաւի ծերուկը կուլար, որ թող տան հայ-
րենիքի սուրբ գատին համար զոհելու: Գնաց ան իր
բաղձանքին համաձայն ու մշեցիի մը արժանավայել
մահով մեռաւ:

Իւզվերան գիւղին մօտերը յոգնած խումբը կուսի

կը բռնէր արշալոյսին: Սերոբ առիւծի պէս կատաղած,
կը նետուի դէպի թշնամուն շարքերը, կը ճեղքէ կանցնի,
կը մտնէ գիւղ և կ'ապաստանի մարագի մը մէջ, ուրկէ
կը կուսի մինչև երեկոյեան, երբ մարագը կը վառեն վրան:

Իր երկու կորիւնները, ՅԱՎՈՒ և ԱԵՏԻՍ, նոյնպէս
կ'իյնան մինչև վերջ կուսելով: Երկու մատող ձագեր էին
ասոնք. մին 22 և միւսը 20 տարեկան. սիրուն դէմքով,
բարձրահասակ և հայաստանցի նորահարսի մը չափ
ամօթխած, Հայրենիքի սիրով վառւած անմեղ հրեշտակներ:

2է, դժբախտ չէ Հայաստանը, երբ հայը գիտէ ամբողջ
ընտանիքով մարտիրոսել փրկութեան սեղանին վրայ...

Սգացինք մենք, ու ամբողջ Ցարօնը պիտի սգայ Առիւծի
և իր ձագուկներու մահը:

Անքար մնացին անոնց գերեզմանները, սակայն ազա-
տութիւն սիրող ամէն հայու սրտին մէջ անոնց անունը
պիտի մնայ: Իրենց օրինակը վարակիչ, իրենց անցեալը
անմոռանալի կոթող մը:

Ապագայ դարերը փառք պիտի կարդան այն մայրերուն,
որ ձեզ դիեցուցին, հայրենիքի հարազատ զաւակներ:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

(ԸՍՍԱՆ ՀՈՆԳՆԻՐՈՐԻ ՆՍՄԱԿ)

Պետերբուրգ, 20 յունւարի, 1904

Յուզել լուրեր, և դարձեալ Էջմիածնի շուրջը: Ու այս
անգամ, կաթողիկոսական նոր զեկուցագրի կամ դիմա-
դրութեան շղուկը չէ, որ ալեկոծման պատճառ է տալիս,
այլ աւելի բարդ և անհամեմատ աւելի փոթորկալից մի
նորութիւն. — կ ա թ ո ղ ի կ ո ս ա կ ա ն գ ա հ ի տ ե-
ղ ա փ ո թ ու թ իւ ն ը . . .

Ահա մանրամասները: Թիֆլիսի վրայով Էջմիածին է
գալիս մի հեռագիր, տրւած Կ. Պօլսից, յայտնի չէ՝ ար-
դեօք հայոց պատրիարքարանից թէ մի այլ շրջանակից,
որով առաջարկուում է Էջմիածնի ծերունի գահակալին
«թափ տալ ստրկութեան փոշին», թողնել Էջմիածինը,
ուր հայոց եկեղեցու ներկայացուցիչը ակնյայտօրէն շղջ-
թայակապ է, և ապաստանել Թիւրքաց Հայաստան: Այդ
կարևոր հեռագրին յաջորդել են նորերը, որոնցով՝ իբրև
յարմարագոյն տեղ կաթողիկոսական աթոռի համար
մատնանիշ են անում երկու կէտ, — կամ Աղթամարը, որ
արդէն աթոռանիստ վայր է, կամ Ցարօնը, որ ունի պատ-
մական հրապոյր: Ստացել են և ուրիշ առաջարկներ,
որոնք հրաւեր են կարգում լուսաւորչական եկեղեցու
պետին՝ աւելի հեռուն նայել, և ի նկատի ունենալով
օսմանեան կառավարութեան հակահայկական տրամա-
դրութիւնները, ընտրել մի ազատ վայր — կամ Եփրատս,
ուր հայոց մի գաղութ կայ արդէն, և կամ Կիպրոս, որ
այնքան մերձաւոր է հայկական կարևորագոյն մի շրջանի,
երկուսն էլ անգլիական հովանու տակ . . .

Այդ հեռագիրներից կարևորագոյնը հասնում է Թիֆ-
լիս այն միջոցին, երբ իշխան Գոլիցին, ան մ ո ո ա-
ն ա լ ի վէրքերին զօհ, շրջապատւած «ուղղափառ» բժիշկ-
ներով, անկողնուն էր ծառայում, և կառավարչապետի
պաշտօնը յանձնւած էր նրա օգնական գեներալ Քրէ-
ղէին: Քրէզէ յարմար միջոց գտաւ մի փոքր «կոծկելու»
հին ճեղքերը: Նա շտապեց Կ. Պօլսի հեռագրի պատճէնը

ուղարկել Պետերբուրգ, կցելով այդ կարևոր նորութեան իր կարծիքը: «Ինչ թուում է,—ասում է նա—որ պէտք է չափաւորել արդի քաղաքականութիւնը, որովհետև աւելի հեռու գնալը սպառնում է ծայրայեղ կերպով գրգռել հայ ազգաբնակչութիւնը և անախորժ բարգուծիւններ առաջ բերել»:

Ինչ մտածեցին և ինչ արեցին այդ հեռագրի հետ Պետերբուրգի մեծերը,—դա առայժմ գաղտնիք է, անծանօթ դրսի աշխարհին: Գաղտնիք չէ այն, ինչ որ արեց և ասաց իշխան Գօլցիցին: Շաբաթներ յետոյ, երբ նա արդէն առողջացան — բայց ոչ խելօքացման — ճանապարհի վրայ էր և վճռեց վերստանալն ակամայ կերպով ուրիշին «գեղած» իշխանութիւնը, նրան ներկայացրին, իմիջի այլ գործերի, Կ. Պօլսի հեռագիրը՝ գեներալ Ֆրեզէի կարծիքի հետ միասին: Հակառակ բժիշկների խորհրդի՝ նա գոռգոռաց, և ըստ հին սովորութեան, ոտները գետին խփեց: Կանչեցին Ֆրեզէին:

— Սա ինչ կը նշանակէ, որոտաց Սատրապը:

— Գա իմ կարծիքն է, ձերդ պայծառափայլութիւն, և ես պարտք համարեցի յայտնել այդ մասին Պետերբուրգ: Ես այդպէս վարեցի ոչ միայն իբրև պաշտօնեայ, այլև իբրև ռուս հայրենասէր: Իմ համոզմամբ՝ մենք շատ հեռու ենք գնացել հայկական գործերի վերաբերմամբ, մի հանգամանք, որ բոլորովին շահաբեր չէ ռուսական շահերին այս երկրում, և ես յոյս ունեմ, որ բարձրագոյն իշխանութիւնը կը յարի այս գործում չափաւորութեան քաղաքականութեան:

— Այդ դեռ մենք կը տեսնենք, որոտաց իշխանը:

Եւ քիչ յետոյ կցեց՝

— Ես դեռ կենդանի եմ և յոյս ունեմ մինչև վերջ հասցնել սկսած գործը: Ես իմ կողմն ունեմ նորին մեծութեան հաւանութիւնը և այդ հաւանութեան վրայ կռթնած՝ մինչև վերջ կերթամ: Եթէ մի օր նոյնիսկ կայսրը ինձ ուզենայ հեռացնել այստեղից, կերթամ Պետերբուրգ, ծունկ կը չորեմ նրա առաջ, և կ'ասեմ,— Թագաւոր, աղաչում եմ, թող ինձ իմ պաշտօնի մէջ մինչև որ իրագործեմ իմ ծրագիրը, հաւասարեցնեմ հայերին հրեաների հետ...

... Սատրապը նորից ընկաւ տաքութեան մէջ:

Բնականօրէն դուք կ'ուզէք իմանալ թէ ինչպէս է վերաբերում կառավարութիւնը այդ «ազմկալի» նորութեան, կաթողիկոսի տեղափոխութեան:

Դժար է ճիշդ պատասխան տալ: Հետեւելով նախկին քաղաքականութեան, Պետերբուրգի իշխանութիւնը պէտք է ցանկանայ իր ձեռքի տակ պահել Էջմիածնի աթոռը՝ արտասահմանի հայութեան վրայ իր ազդեցութիւնը չբեկանելու համար: Սակայն այդ քաղաքականութիւնը, վերջին տարիներս, ինչպէս յայտնի է զգալիօրէն նսեմացել է և տեղի տւել բռնի միջոցներով: Կալիսը Էջմիածնի դէմ այժմ՝ աշկարայ է: Այժմեան հովերի տեսակետից՝ «Գօլցիցիեան դպրոցի» համար գուցէ և ձեռնտու է հայոց կաթողիկոսի փախուստը կամ մեկնումը Էջմիածնից, որպէս զի դրանով վերջնականապէս լուծւեն այն մի քանի արտոնութիւնները, որոնք պատկանում են հայոց եկեղեցուն, դուած. օրինական ձեւերի տակ: «Կաթողիկոս չկայ, ուրեմն մենք պէտք է կարգադրենք գործերը» — կ'ասեն նրանք: Բայց այդու հանդերձ՝ Էջմիածնի գահակալի գաղտնի հեռանալը Կովկասից — բացարձակ

կերպով այդ անկարելի է — նրա ապաստանելը մի այլ երկիր, այդ առիթով ծագած աղմուկը և ուրիշ բարգուծիւններ՝ ախորժելի լինել Պետերբուրգի կառավարութեան համար չեն կարող և ահա թէ ինչու այն օրերից սկսած, երբ լուրեր պտտեցին հայրապետական գահի տեղափոխութեան մասին, կովկասեան իշխանութիւնը յատուկ միջոցներ ձեռք առաւ:

Հրամայած է Երևանի նահանգապետին՝ մօտիկից հսկել կաթողիկոսի անձնաւորութեան վրայ, գիտել նրա զբօսանքները, նրա իւրաքանչիւր քայլը: Երբեմն ծերունի Խրիմեան, ազատօրէն և աննկատելի դուրս էր գալիս Էջմիածնից, գնում Երևան, անցնում Ալէքսանդրօպօլ, պտոյտներ անում գիւղերի մէջ, և դուրս գալիս այցի նոյնիսկ հեռաւոր տեղեր, ինչպէս Սեան, Սանահին, Թիֆլիս: Այժմ այդպէս չէ: Նրան հրտուում են շատ մօտիկից: Յարմար միջոցին նրան շօջապատում են ոստիկաններով իսկ երբ յարմար չէ, հսկողութիւնը յանձնում են գաղտնի լրտես-ոստիկանութեան: Եւ այդ այնքան խստօրէն, որ թէ յիշուի Վասպուրականի Արծիւը կամենար թռչել դէպի Վարազ, դէպի Ցարօնի սարերը, կամ դէպի այն երկիրները, որ «հայրենիք» չէ, բայց ազատ է,— մի ակնթարթում աներևոյթ ձեռքը՝ տեսանելի դարձած՝ կը բռնէր նրա երկու թևերից և կը վերաբազմեցնէր այն գահի վրայ, որ երբեմն այնքան տենչալի, իսկ այժմ այնքան փշոտ և տանջող է...

Ունայն են, սակայն, այդ զգուշութիւնները, լրտեսական ու ոստիկանական խստութիւնները: Հայոց կաթողիկոսը Էջմիածնից չի հեռանայ, և մանաւանդ չի փախի երբեք: Զինուորը, վասնգիրուպէին, կուի դաշտի վրայ պիտի լինի: Այդ պարտականութիւնն է դուած հայոց եկեղեցուն ներկայացուցչի վրայ, նրա ընտրութեան օրից, և այդ է, որ թելադրում է նրան ամբողջ հայութիւնը, յունիսի 12-ից սկսած:

